

Աթոռ դարձաւ: Արժանապատիւ Հօր դորա-
րական շարադրութեան վերնագիրն է *Beiträge
zur alt armenischen nominalen Stammbildung.*

Ահա. 1-ին Մայր Աթոռ վերադարձաւ
նաե Տ. Գարեգին վարդ. Յովսէփեան, որ
ծանր հիւանդութեան պատճառով երկար
ժամանակ հեռացած էր Մայր Աթոռից: Նորա-
րայակցութեան ժամանակ «Արարատ»-ի խմբ-
րագրութեան գործը ղեկավարում էր ձեւա-
րանի տեսուչ բարձր. Տ. Կարապետ վարդա-
պետը:

Ահա. 12-ին Մայր Աթոռ եկան Մար-
տիրոզի համալսարանի պրիւատ զոցենա դր.
Ֆրանց Նիկողայուս Ֆինի իւր քրոջ համեա-
տափայլ օր. Ազնէս Ֆինիի հետ: Երկու
հարազատները մտադիր են հայերէնով և
Հայոց մատենագրութեամբ զբաղուելու: Հո-
գեոր Տիրոջ հրամանով ամենայն տեսակ յար-
մարութիւններ կարուին՝ մեր յարգելի հիւ-
րերի պանդխտութիւնը քաղցրացնելու և նոցա
զիտանական աշխատութիւնները զիւրացնելու
համար:

Ահա. 16-ին Մայր Աթոռ ժամանեցին
երկու ուրիշ ծանաղարհօրդ գերմանացիներ՝
դր. Պաուլ Բորրախ և Բուխֆինկ: Առաջինը
յայտնի է մեր հասարակութեան, որովհետեւ
բազմաթիւ դասախօսութիւններ է կարդացել
նա իւր հայրենիքում, յօդուածներ և զբքեր
գրել Հայոց մասին: Երկու ծանաղարհօրդ-
ները մէկ օր Մայր Աթոռում հիւր մնա-
լուց յետոյ՝ Պարսկաստան գնացին:

ԶՈՒԱՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂԱԽՆԵՐԸ.


Յունիսի համարում մի քանի տեղեկու-
թիւններ էինք հաղորդել մեր միտքանակից
Հայր Խաչիկ վարդապետի Զուարթնոց եկե-
ղեցու աւերակների տեղը կատարած պեղման
մասին: Ամառուայ ընթացքում չնայելով շո-
գերի սաստիկութեան Հայր Խաչիկը զարմանալի
տոկունութեամբ շարունակեց իւր պեղում-
ները և անսպասելի արդիւնքներ ունեցաւ:

Մեր յայտնած քանդակուած արձուից
զատի որ գտնուել էր եկեղեցու արեւմտահա-
րաւային մեծ սեան մօտ, դարձեալ երեք ու-
րիշը գտնուեցան նոյն մեծութեամբ և ճա-
շակով քանդակուած: Եկեղեցու յատակագիծն
այժմ բոլորովին բացուած է և հիւսիսային
կողմի սիւների բեկորներն իրենց խոյակնե-
րով, որոնցից մի քանիսի պատկերը գետե-
ղուած է այստեղ, զազափար են տալիս
թէ ի՞նչ հոյակապ շինութիւն է եղել Զուարթ-
նոց եկեղեցին:

Պատերին ծեփած
գաջերի վերայ արա-
բերէն և ասորերէն
արձանագրութեան
հետքերի հետ որոնց
մասին յայտնել էինք
առաջ հետզհետեւ,
երեւան եկան նաե յա-
նաբէն և լրացնէն
արձանագրութեանց
հետքեր: Բայց ամե-
նաթանգազինը զե-
տայն մեծ արշանա-
գրութիւնն էր՝ հիւ-
սիս արեւմտեան դրան
գլխին հաստատած՝
որի պատկերը զըր-
ուած է այստեղ: Ար-
ձանագրութիւնը փո-
րագրուած է կո-
թողաձե որձաքարի
սեան վերայ, որ պա-
տուանդանով հաս-
տատուած է եղել մի
քարի մէջ, ինչպէս
հին խաչքարերն էին,
Զուարթնոց եկեղե-
ցու շինութիւնից ա-
ռաջ: Քարի երկա-
րութիւնը 3 արշին
14 վերջով է, լայ-
նութիւնը 14 վերջ,
հաստութիւնը 8 վրջ:

Արձանագրութիւնը
47 տող է: Վերջին օրերս մի թանգազին
հնութիւն ևս յայտնուեցաւ մոզայիկ խաչի
մի մաս: Այս գիւտը կարեւոր է այն պատճա-
ռով, որովհետեւ այդպիսի մոզայիկներ շատ
հազուագիւտ են Հայոց մէջ, չլիշելով երու-
սաղէմում մի քանի տարի առաջ հայերէն ար-
ձանագրութեամբ գեղեցիկ մոզայիկը, որ հրա-
տարակուած է *Zeitschrift der Deutschen
Palästina-Vereins. Band. XVIII*: Հաւանօրէն
Երուսաղեմի մոզայիկը աւելի ուշ ժամանակի
գործ է քան Զուարթնոց եկեղեցունը: Մո-
զայիկ խաչը շրջապատուած է մրտենու խո-
շոր և կանաչ տերեւների մի պսակով: Հայր
Խաչիկը պատրաստում է իւր պեղումների և

ՎՈՐՁԱՆՈՅ



գիւտերի մանրամասն նկարագրութիւնը որ ժամանակին կհրատարակուի «Արարատ»-ում:

Ա Ջ Դ

Ազգիս Ա. Նահապետ Հայրապետի հրամանաւ և Կառավարութեան պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ ձեռնարկելով Զուարթնոց ա. Գրիգոր (այժմ՝ խանդարուած եկեղեցի անուանեալ), եկեղեցւոյ պեղմանը, ցարդ յաճողեց ինձ ձեռք բերել վեց լեզուով յիշատակագրութիւններ և արձանագրութիւններ — այն է՝ բեկոսագիր, Հայերէն, Յունարէն, Ասորերէն, Արաբերէն և Վրացերէն լեզուներով: Արանով պատիւ եմ համարում գիտնական աշխարհին տալ այն եկեղեցւոյ Հիւսիս Արեւմտեան դռան գլխի բեկոսագիր արձանագրութիւնը որը բաղկացած է 47 տողից: Քարը որձաքար — մեծութիւնը երկարութիւնը 3 արշ. 14 վերջոյ լայնութիւնը 14 վերջոյ. հաստութիւնը 8 վերջոյ: 23—24 տողերի միջանդից կտրուած. իսկ մնացեալ յիշատակագրութիւնների և արձանագրութիւնների մասին մանրամասն յետոյ: Պեղումն զեռ ևս շարունակուում է*:

Տեսուչ Հայրեկեան Թանգարանի

Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԽԱՉԻԿ Ե՝ Գ. ԴԱՏԵԱՆ.



* Իրեւ նմուշ հրատարակում եմք այն եկեղեցւոյ հրատարակեալ կնիքումներէց՝ խաղոյ, նուռ և այլ խոյակագործեր:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Օգոստոսի 20-ին ձեմարանի տեսուչ Տ. Կարապետ վարդապետ վերագործաւ իւր ուսումնական ձանադարհորդութիւնից, որ ձեռնարկել էր մի խումբ լսարանական ուսանողների հետ: Հայր տեսչի առաջնորդութեամբ երիտասարդ ուսանողները այցելել են Ուտիք, Արցախ և Սիւնեաց նահանգները և Գողթն գաւառի ու հին Նախիջևանի վերայով կրկին ձեմարան դարձել:

ձեմարանի համար այս տարի նոր ուսուցիչներ են նշանակուած Մայր Աթոսի միաբաններից Արժ. Տեաքք Եղնիկ վարդապետ՝ հայ լեզուի և դպրութեան, Յուսիկ վարդապետ Զոհրաբեան տատուածարանական առարկաների, մաթեմատիքայի համար հրաւիրուած է Պ. Բուդաղեան, ստորին դասարանների ուսուցիչների համար Պ. Արրահամեան:

Սեպտ. 4-ին վերաքննութիւններն ու նոր ընդունուողների քննութիւնները վերջացան և սովորական ազօթքից շիտոյ՝ դասկսուեցաւ: Հոգեւոր Տիրոջ հրամանով այս տարի ընդհանուր ընդունելութիւն չկար սրպէս բացառութիւն միայն ընդունուած են 35 հոգի:

ՏԱԺԿԱՀԱՅԳ.

Խառն ժողովը դումարուելով գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ստեփան փաշա Առլանեանի՝ հետեւեալ կարգադրութիւններն ըրաւ:

Բողէշի Առաջն. Տեղապահ Եղիշէ վարդապետի օգտակար պաշտօնավարութիւնը նկատողութեան առնելով, միժեց հրաժարականը և որոշեց գրել, որ անձնական տկարութիւնը զարմանելու համար թէ և եռամսեայ արձակուրդ մը տրուած էր իրեն, սակայն ներկայութիւնը կարեւոր ըլլալով հոն, յարմար առթի մը պէտք է յետաձգէ այդ արձակուրդը: Ժողովը մերժեց նաև Վանայ այցելու հովիւ: